

ՄԱՅԻՍ 28-Ի ՀԱՆԴԵՍԸ

ԱՏԻՍ ԱՊԱՊԱՅԻ ՄԷՋ

(Սեփական քղրակցութիւն)

ԱՏԻՍ-ԱՊԱՊԱ, Յունիս 11

Յունիս 6ին, անսխալ շուքով
և խանգով առաջնամբ անուանու
մայիս 28ին՝ անը Ա. Ապապայի մէջ:

Ասիս Ապապային ունի իր անու-
կառարութեանց ցանկին մէջ երկու
ուսուց անոնք, մէկը՝ պրիլ 11ը իսկ
միւսը մայիս 28ը:

Ասիս Ապապային շատ լու կը
իշտէ. թէ ինչպէս եօթը տարի առաջ
հազիւ 24 հոգիով կը անուէր այս
անը. այն ալ պարզ անհատի մը առ-
նը մէջ. այլ է կոցուլիւնը այսօր:
Այսօր Մայիս 28ը իբր խորհրդանշը
մեր փրկութեան ու ազատութեան, կը
անուի միջոցով գաղութին կողմէ:

Այս տարի հանգէտը տեղի ունե-
ցաւ Ras Makonen-ի սրահներու մէջ:

Նախագահութիւնը յանձնուած էր
ընկ. Հ. Բաթարանի, որ իր բացման
գեղեցիկ և բովանդակալից հատին մէջ
հայ ազատագրական շարժումներու
մէկ համաստ պատմականը ըրաւ:
Մայիս 28ի յաղթանակը վերագրելով
բովանդակ հայ ժողովուրդին յամառ
ու յարատեւ հիգերուն:

Բացման խօսքէն անմիջապէս
վերջ գահաժողովին Ֆանֆառին կողմէ
երգուանուէր միջոցով Որոտանըն, որ յան-
կայս ունկնդրուեցաւ:

Նուագախումբէն յետոյ Գ. Կիւ-
լէսէրեան արտասանեց Սիամանթօի
«Սուրիս» կային աջակցը. սրուն յա-
ջորդեց նուագախումբը «Լօ' Լօ' սով»:
Նախագահին հրաւերով բեմ հրաւիր-
ուեցաւ Յ. Ազնաւորեան, որ իր բա-
նախօսութեամբ բացատրեց Մայիս 28ի
օրուայ արժէքը:

Դադարի միջոցին նուագախումբը
նուագեց գասական գեղեցիկ կոորներ

Հանգէտի Բ. մասը սկսաւ պ. Ե.
Տերենցի կողմէ Ահարոնեանի «Ուխ-
տաւորը» ընթերցումով: Յաջորդ նու-
ագէ մը վերջ Ա. Սուրիսեան խօսե-
ցաւ կէս ժամու շոք, ծանրանալով
Մայիս 28ին յաջորդող, ինչպէս նաեւ
անկէ ետքը եկող դէպքերուն վրայ:

Նախագահին փակման խօսքէն
վերջ, ընդարձակ սրահին մէջ հացկե-
րայթ արուեցաւ, սրուն 100է աւելի
անձեր մասնակցեցան, ֆոխն ի փոխ
բաժակահառեր խօսուեցան, տեղի ու-
նեցան արտասանութիւններ, երգ ու
նուագ:

Ճշմարիտ հանգէտ մը ու ան մըն
էր Մայիս 28ի անը Ասիս Ապապայի
մէջ: Եթեւ պահալը անգամ մըն ալ եկաւ
վկայելու, որ ինք իր բոլոր զգացում-
ներով կապուած կը Յայ հայ հայրե-
նիքին և անոր մեծագոյն երազին:

ԹՂԹԱԿԻԾ